ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » «_____» 2026թ. **N ---- -Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 718-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի «Երևան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին» N 718-Ն որոշման հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 3-6-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Թույլտվություն ստանալու համար դիմումատուն Երևանի քաղաքապետին ներկայացնում է էլեկտրոնային եղանակով դիմում՝ www.dimum.yerevan.am առցանց հարթակի միջոցով, որին կից ներկայացվում են.

1) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման քաղվածքը,

2) շենքի կամ շինության սեփականության կամ օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը,

3) տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը,

4) ճարտարապետա-գեղարվեստական նախագծային առաջարկ՝ սույն հավելվածի 3-րդ գլխում սահմանված պահանջներին համապատասխան,

5) ընթացիկ տարվա համար Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 48-Ն որոշմամբ սահմանված պարտադիր բարեկարգման պահանջների կատարման վերաբերյալ Տարածքի բարեկարգման համաձայնեցված նախագիծը:

4. Դիմումների վերաբերյալ սահմանված կարգով և 3 աշխատանքային օրում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչություն եզրակացություն են ներկայացնում Երևանի համապատասխան վարչական շրջանի ղեկավարը՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների առկայության և Երևան համայնքի նկատմամբ չկատարված պարտավորությունների վերաբերյալ, իսկ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը՝ սույն հավելվածի 8-16-րդ կետերով սահմանված պահանջների կատարման մասին:

5. Եթե թույլտվությունը ստանալուց հետո սույն հավելվածի 3-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերի փոփոխություններ չեն կատարվել, ապա դիմումի վերաբերյալ սույն հավելվածի 4-րդ կետով նշված ստորաբաժանումների կողմից եզրակացություններ չեն տրամադրվում, իսկ դիմումին կից ներկայացվում են միայն տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը, ընթացիկ տարվա համար Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 48-Ն որոշմամբ սահմանված պարտադիր բարեկարգման պահանջների կատարման վերաբերյալ Տարածքի բարեկարգման համաձայնեցված նախագիծը:

6. Դիմումը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում, բացառությամբ եթե պատմության և մշակույթի անշարժ հուշարձան շենքի դեպքում Երևանի քաղաքապետարանի կողմից ճարտարապետա-գեղարվեստական նախագծային առաջարկն ուղարկվել է պետական լիազոր մարմին՝ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով, որի դեպքում դիմումը քննարկվում է 30 օրվա ընթացքում, էլեկտրոնային եղանակով դիմումատուին տրվում է համապատասխան թույլտվություն կամ դիմումը մերժվում է: Դիմումը մերժվում է եթե՝

1) սույն կարգի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացվել են թերի (այդ թվում՝ տեղական տուրքի գումարը վճարվել է Երևան համայնքի ավագանու որոշմամբ սահմանված դրույքաչափից պակաս) և դրա մասին դիմումատուին տեղեկացնելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս կողմից դրանք չեն համալրվել,

2) սույն կարգի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացվել են ամբողջական, սակայն դրանք չեն համապատասխանում սույն հավելվածով սահմանված պահանջներին,

3) գործունեության իրականացման վայրի շենքը կամ շինությունը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տվյալ գործունեությամբ զբաղվելու համար նախատեսված պահանջներին, ինչի վերաբերյալ պետական լիազոր մարմնի (մարմինների) կողմից ստացվել է համապատասխան տեղեկատվություն,

4) սույն հավելվածի 4-րդ կետով նշված մարմինների կամ պատմության և մշակույթի անշարժ հուշարձան շենքի դեպքում ճարտարապետա-գեղարվեստական նախագծային

առաջարկի վերաբերյալ պետական լիազոր մարմնի կողմից ստացվել է բացասական եզրակացություն:»:

2. Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշման 1-ին կետն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է սույն որոշման 1-ին կետն ուժի մեջ մտնելուց հետո թույլտվություն ստանալու համար ներկայացվող դիմումների վրա:

4. Սույն որոշման 2-րդ կետն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
«_____» _____2026թ.
N _____ -Ն որոշման

«Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2023 թվականի փետրվարի 14-ի
N 718-Ն որոշման

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՏՎՅԱԼ ՕԲՅԵԿՏԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՄԱՌԱՅԻՆ (ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ը ՆԵՐԱՌՅԱԼ) ԵՎ ՁՄԵՌԱՅԻՆ (ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՊՐԻԼԻ 30-Ը ՆԵՐԱՌՅԱԼ) ՍԵԶՈՆՆԵՐԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Երևան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում (այսուհետ՝ Տարածք) ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգի, պայմանների ու սահմանափակումների հետ կապված հարաբերությունները:

2. Երևան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից Տարածքներում ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվությունները տրամադրում է Երևանի քաղաքապետը, եթե ներկայացված դիմումը համապատասխանում է սույն հավելվածով սահմանված պահանջներին:

2. ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

3. Թույլտվություն ստանալու համար դիմումատուն Երևանի քաղաքապետին ներկայացնում է էլեկտրոնային եղանակով դիմում՝ www.dimum.yerevan.am առցանց հարթակի միջոցով, որին կից ներկայացվում են.

1) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման քաղվածքը,

2) շենքի կամ շինության սեփականության կամ օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը,

3) տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը,

4) ճարտարապետա-գեղարվեստական նախագծային առաջարկ՝ սույն հավելվածի 3-րդ գլխում սահմանված պահանջներին համապատասխան,

5) ընթացիկ տարվա համար Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 48-Ն որոշմամբ սահմանված պարտադիր բարեկարգման պահանջների կատարման վերաբերյալ Տարածքի բարեկարգման համաձայնեցված նախագիծը:

4. Դիմումների վերաբերյալ սահմանված կարգով և 3 աշխատանքային օրում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչություն եզրակացություն են ներկայացնում Երևանի համապատասխան վարչական շրջանի ղեկավարը՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների առկայության և Երևան համայնքի նկատմամբ չկատարված պարտավորությունների վերաբերյալ, իսկ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը՝ սույն հավելվածի 7-11-րդ կետերով սահմանված պահանջների կատարման մասին:

5. Եթե թույլտվությունը ստանալուց հետո սույն հավելվածի 3-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերի փոփոխություններ չեն կատարվել, ապա դիմումի վերաբերյալ սույն հավելվածի 4-րդ կետով նշված ստորաբաժանումների կողմից եզրակացություններ չեն տրամադրվում, իսկ դիմումին կից ներկայացվում են միայն տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը, ընթացիկ տարվա համար Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 48-Ն որոշմամբ սահմանված պարտադիր բարեկարգման պահանջների կատարման վերաբերյալ Տարածքի բարեկարգման համաձայնեցված նախագիծը:

6. Դիմումը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում, բացառությամբ եթե պատմության և մշակույթի անշարժ հուշարձան շենքի դեպքուում Երևանի քաղաքապետարանի կողմից ճարտարապետա-գեղարվեստական նախագծային առաջարկն ուղարկվել է պետական լիազոր մարմին՝ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով, որի դեպքում դիմումը քննարկվում է 30 օրվա ընթացքում,

էլեկտրոնային եղանակով դիմումատուին տրվում է համապատասխան թույլտվություն կամ դիմումը մերժվում է: Դիմումը մերժվում է, եթե՝

1) սույն կարգի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացվել են թերի (այդ թվում՝ տեղական տուրքի գումարը վճարվել է Երևան համայնքի ավագանու որոշմամբ սահմանված դրույքաչափից պակաս) և դրա մասին դիմումատուին տեղեկացնելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս կողմից դրանք չեն համալրվել,

2) սույն կարգի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացվել են ամբողջական, սակայն դրանք չեն համապատասխանում սույն հավելվածով սահմանված պահանջներին,

3) գործունեության իրականացման վայրի շենքը կամ շինությունը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տվյալ գործունեությամբ զբաղվելու համար նախատեսված պահանջներին, ինչի վերաբերյալ պետական լիազոր մարմնի (մարմինների) կողմից ստացվել է համապատասխան տեղեկատվություն,

4) սույն հավելվածի 4-րդ կետով նշված մարմինների կամ պատմության և մշակույթի անշարժ հուշարձան շենքի դեպքուում ճարտարապետա-գեղարվեստական նախագծային առաջարկի վերաբերյալ պետական լիազոր մարմնի կողմից ստացվել է բացասական եզրակացություն:

7. Հանրային սննդի ծառայության կազմակերպման համար Տարածքը տրամադրվում է.

1) բացառապես տվյալ սեզոնի ընթացքում հանրային սննդի ծառայություն կազմակերպելու համար, որտեղ մայթի լայնության առավելագույնը վաթսուն տոկոսի չափով հատվածում՝ ապահովելով ոչ պակաս, քան մայթի 1,8 մետր լայնությամբ ազատ անցուղին կարող են տեղադրվել համապատասխան սպասարկումն ապահովելու համար անհրաժեշտ սեղաններ ու աթոռներ, սպասարկման համար անհրաժեշտ շարժական պահարան, ինչպես նաև հովանոցներ կամ միայն շինություններին կից հատվածներում առանց կրող կամ հենասյուների տեղադրում պահանջող շարժական ծածկոցներ (մարկիզաներ): Նախորդ նախադասությամբ ամրագրված 1,8 մետր լայնության պահպանման պահանջը չի տարածվում տնտեսվարող սուբյեկտների դեպի Ա. Պուշկինի, Ա. Թամանյանի և Մ. Սարյանի փողոցներ ուղղված ճակատային հատվածների վրա,

2) տվյալ շենքի, շինության ճակատային մասով, բացառությամբ եթե առկա է հարակից 1-ին և (կամ) նկուղային և (կամ) կիսանկուղային հարկի շենքի, շինության սեփականատիրոջ (սեփականատերերի) գրավոր համաձայնությունը,

3) շինությանը կից հատվածից մինչև մայթի եզրը, բացառությամբ կանաչապատ գոտին և հետիոտնի երթևեկության համար նախատեսված ազատ անցուղին,

4) մայթի նույն ուղղությամբ գտնվող սրճարաններին ճակատից հավասար հեռավորության վրա:

8. Սեզոնային սրճարանի կահավորման մեջ օգտագործվող հովանոցները կարող են լինել կամ միագմբեթ կամ բազմագմբեթ.

1) հովանոցների և շարժական ծածկոցների բարձրությունը չպետք է գերազանցի շենքի, կառուցվածքի առաջին հարկի բարձրությունը (ծածկի գիծ առաջին և երկրորդ հարկերի միջև), որը զբաղեցնում է հանրային սննդի օբյեկտը, իսկ երկայնական և լայնական չափերը չպետք է գերազանցեն Տարածքի չափերին,

2) սեզոնային սրճարանի հովանոցների և շարժական ծածկոցների կահավորման համար պետք է օգտագործել պաստելային երանգի նյութեր,

3) սեզոնային սրճարաններ կազմակերպելիս վրանների օգտագործում չի թույլատրվում:

9. Ձմեռային սեզոնին Տարածքի կահավորման համար թույլատրվում է Տարածքում տեղադրել տաքացուցիչներ:

10. Թույլտվությունը ստանալուց հետո թույլտվություն ստացած անձը պարտավոր է.

1) Տարածքում կազմակերպվող ծառայությունների իրականացման ողջ ժամանակահատվածում ապահովել Տարածքին հարակից կամ անմիջականորեն ներառող հատվածներում հետիոտնի համար նախատեսված մայթերի կամ անցուղիների գոտիների լիարժեք ազատ միջավայրը՝ հաշվի առնելով նաև բնակչության տեղաշարժման դժվարություններ ունեցող խմբերի մատչելիությունն ապահովելու անհրաժեշտությունը (թեքահարթակների, բազրիքների, հատուկ շոշափելի և ազդանշանային գծանշումների միջոցով),

2) տարբեր տնտեսվարող սուբյեկտներին պատկանող և միևնույն շենքում, կառուցվածքում տեղակայված հանրային սննդի օբյեկտներում մի քանի սեզոնային սրճարաններ տեղադրելու դեպքում սեզոնային սրճարանը կահավորել մեկ ճարտարապետական և գեղարվեստական ոճով (փոխկապակցված գունային լուծում),

3) թույլտվությամբ սահմանված ժամկետի ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Տարածքն ազատել և բերել նախկին տեսքին:

11. Հանրային սննդի սեզոնային ծառայությունն արգելվում է կազմակերպել.

1) կանաչապատ տարածքներում,

2) ստորև նշված փողոցներում՝

ա. Ազատության հրապարակին հարակից տարածքներում և դրան հարող մայթերին,

բ. Մ. Մաշտոցի պողոտայի կառուցապատման գծից դուրս հատվածներում,

գ. Սայաթ-Նովա պողոտայի Սայաթ-Նովա-Տերյան և Սայաթ-Նովա-Մ. Մաշտոց խաչմերուկներում ընկած հատվածում,

դ. Օղակաձև զբոսայգում և դրան հարող մայթերին:

3. ՏԱՐԱԾՔԻ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

12. Տարածքի կահավորման ճարտարապետա-գեղարվեստական նախագիծը ներառում է տեքստային և գրաֆիկական նյութեր:

13. Տեքստային նյութերը կազմվում են բացատրական գրության տեսքով և ներառում են հիմնական ճարտարապետական լուծումների նկարագրությունը՝ նշելով օբյեկտի հարաչափերը և գույները՝ ըստ սույն հավելվածով նախատեսված ցանկի:

14. Գրաֆիկական նյութերը ներառում են.

1) առկա իրավիճակի լուսանկարներ՝ առանց սեզոնային սրճարանի տեղակայման: Լուսանկարները պետք է ապահովեն սեզոնային սրճարանի գտնվելու վայրի ամբողջական հստակ ցուցադրումը,

2) սեզոնային սրճարանի տեղակայմամբ լուսանկարներ,

3) մասնագիտական որակավորում ունեցող չափագրողի կողմից տրամադրված տարածքի չափագրության տեղագրական հանույթը և իրադրության հատակագիծը՝ 1:500 կամ 1:200 մասշտաբով, որտեղ նշվում են տարածքի ուրվագծային չափերը և մակերեսը,

4) գծագրեր (ճակատներ, հատակագծեր՝ կահավորման տարրերով, կտրվածքներ, հիմնական կառուցվածքային տարրեր)՝ 1:200 մասշտաբով:

4. ՏԱՐԱԾՔԻ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ԾԱԾԿԻ ԳՈՒՅՆԵՐԸ

15. Սեզոնային սրճարանի կահավորման համար առաջարկվող թույլատրելի գունային համարները ներկայացված են սույն հավելվածի ցանկով՝ հովանոցների և շարժական ծածկոցների համար:

ՑԱՆԿ
ՍԵԶՈՆԱՅԻՆ ՍՐՃԱՐԱՆԻ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԳՈՒՆԱՅԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԻ

Գույնի օրինակը և ՌԱԼ-ի (RAL) առավելագույն համապատասխանող համարը	Բնական գույների համակարգ (NCS) (S)	Քառագույն ինքնատիպություն (CMYK)	Եռագույն ինքնատիպություն (RGB)
RAL 3009	6020-Y90R	0 58 35 70	92 50 51
RAL 3020	1580-Y90R	0 100 85 15	189 7 33

RAL 2004	1070-Y70R	0 81 79 0	236 75 48
RAL 1033	0580-Y30R	0 55 100 0	240 132 0
RAL 1018	0530-Y20R	0 21 60 0	255 209 122
RAL 1003	2502-Y	0 0 10 33	184 183 173
RAL 1016	0540-Y	0 3 70 0	254 230 107
RAL 6010	3050-G70Y	20 0 92 47	130 135 0
RAL 6011	4020-G50Y	20 0 50 48	124 134 91
RAL 6005	5040-B90G	100 0 80 60	0 81 52
RAL 6000	6010-G10Y	35 0 40 65	76 95 76
RAL 5019	5040-B10G	92 0 15 70	0 70 85
RAL 9001	1002-G	5 0 8 5	235 240 231
RAL 9007	1000-N	35 30 30 15	152 150 149

16. Սույն որոշման պահանջներին չհամապատասխանող ճարտարապետա-գեղարվեստական նախագծային առաջարկները՝ դիմումատուի խնդրանքով, կարող են քննարկվել Երևանի քաղաքապետի կողմից և տրվել դրական եզրակացություն, բացառությամբ, եթե դրանք չեն համապատասխանում քաղաքաշինական բարենպաստ և անվտանգ միջավայրի ձևավորմանը և չեն ապահովում մարդկանց և շրջակա միջավայրի անվտանգությունը: »:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 718-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N 718-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի համաձայն՝ հանրային սննդի ծառայության կազմակերպման համար ներկայացված դիմումների վերաբերյալ սահմանված կարգով և ժամկետներում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և ծառայությունների վարչություն եզրակացություն են ներկայացնում Երևանի համապատասխան վարչական շրջանի ղեկավարը՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների առկայության, Երևան համայնքի նկատմամբ չկատարված պարտավորությունների, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 48-Ն որոշմամբ սահմանված պարտադիր բարեկարգման պահանջների կատարման, Տարածքի բարեկարգման նախագծին համաձայնություն տալու, իսկ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը՝ ճարտարապետա-գեղարվեստական նախագծային առաջարկի և սույն հավելվածի 8-16-րդ կետերով սահմանված պահանջների կատարման մասին:

Երևան քաղաքի ավագանու վերը նշված որոշման հավելվածի 5-րդ կետի կարգավորումների համաձայն՝ եթե հանրային սննդի ծառայության թույլտվությունը ստանալուց հետո հաջորդ տարիներին նույն հավելվածի 3-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերի փոփոխություններ չեն կատարվել՝ դիմումին կից ներկայացվում են միայն տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը, բացառությամբ, եթե տեղի է ունեցել քաղաքաշինական իրավիճակի փոփոխություն:

Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ն որոշման կարգավորումների շրջանակներում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և ծառայությունների և արտաքին ձևավորման և գովազդի վարչությունները միավորվել են, ինչի արդյունքում ստեղծվել է առևտրի, ծառայությունների և գովազդի վարչություն, ուստի անվանումը նախագծով նախատեսվում է վարչության անվանումը վերանայել:

Սպենդիարյան փողոցի Մ. Մաշտոցի պողոտա-Ղ.Փարպեցի փողոցների միջև ընկած հատվածում գտնվում են Մ. Մաշտոցի պողոտայի և Մոսկովյան փողոցի շենքերը, որոնց մայթերի լայնությունները թույլ են տալիս, որպեսզի նշված շենքերի հարակից տարածքներում կազմակերպվեն հանրային սննդի սեզոնային ծառայություն, իսկ մյուս՝ Ղ.

Փարպեցի-Մոսկովյան հատվածում որտեղ մայթերն ունեն սահմանափակ լայնություն կգործի արդեն իսկ Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N 718-Ն որոշման հավելվածի 7-րդ կետով ամրագրված հետիոտնի ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով մայթերի չափերին ներկայացված պահանջները, ուստի նախագծով նախատեսվում է Սպենդիարյան փողոցն արգելվող փողոցների ցանկից հանել:

Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 46-Ա որոշման հավելվածով հաստատված Երևանի զարգացման 2024-2028 թվականների հնգամյա ծրագրով նախատեսված է իրականացնել առևտրի և ծառայությունների ոլորտի թույլտվությունների հայցման և տրման թվայնացման գործընթացներ, ինչը կհանգեցնի տնտեսվարող սուբյեկտների աշխատանքի հարմարության և արդյունավետության, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցման և թափանցիկության բարձրացմանը:

Երևան քաղաքում առևտրի և ծառայությունների ոլորտի մի շարք թույլտվությունների դիմումները ներկայացվում են և թույլտվությունները տրամադրվում են https://dimum.yerevan.am/ առցանց հարթակի միջոցով, ուստի նախատեսվում է Երևան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվությունների դիմումները ներկայացումը և թույլտվությունների տրամադրումը նույնպես իրականացնել նշված առցանց հարթակի միջոցով:

Հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվություն տրամադրելուց հետո հաջորդ տարիներին սահմանված փաստաթղթերի փոփոխություններ չլինելու պարագայում արդեն իսկ ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրվել են, ուստի նախագծի ընդունման արդյունքում նախատեսվում է թույլտվությունները տրամադրել ավելի կարճ ժամկետներում, եզրակացություն տրամադրող ստորաբաժանումների փաստաթղթաշրջանառության բեռը թեթևացնել, թույլտվությունների տրամադրման գործընթացն ավելի արագ և արդյունավետ կազմակերպել:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Երևան քաղաքի մայթերի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու, շենքերի կառուցապատման ճարտարապետա-քաղաքաշինական լուծումները և ճարտարապետական կերպարն ու բարենպաստ տեսողական ընկալման պայմանները չաղճատելու, դրանց հարակից տարածքների բարեկարգման առանձնահատկությունները պահպանելու, շենքերի սրբատաշ երեսապատումները չվնասելու, զբոսաշրջիկների և մայրաքաղաքի բնակիչների և հյուրերի համար Երևան քաղաքը ավելի գրավիչ ու հարմարավետ դարձնելու, նպատակով՝ անհրաժեշտություն է առաջացել Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N 718-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ:

Միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախագծի 2-րդ կետով նախատեսվում է Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N 718-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, որի համաձայն ճարտարապետա-գեղարվեստական նախագծային առաջարկի վերաբերյալ սահմանվում են նոր իրավակարգավորումներ, ուստի տնտեսվարողների կողմից իրենց վարքագիծը սահմանված պահանջներին համապատասխանեցնելու համար նախատեսվում է նոր խմագրվող հավելվածն ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել 2027 թվականի հունվարի 1-ից, իսկ թույլտվությունների հայցման գործընթացը հեշտացնելու և պարզեցնելու, դիմումները քննարկումը շատ ավելի արագ կազմակերպելու, ինչպես նաև թույլտվությունների տրամադրման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է նախագծի 1-ին կետով սահմանվող կարգավորումների ուժմի մեջ մտնելու ժամկետը սահմանել որոշման պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ